ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 155-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 8-ի երկրորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2.Ապարան համայնքի վարչական բյուջեի եկամուտներն ու ծախսերն ավելացնելու, վարչական և ֆոնդային բյուջեներում ավելացումներ և պակասեցումներ կատարելու և «Ապարան համայնքի 2026թ բյուջեն հաստատելու մասին» ավագանու 26.12.2025թ N194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ս.Շերիկյան)

3.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկի համար «Ակբա Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից (այսուհետ՝ լիզինգատու) լիզինգի միջոցով բազմաֆունկցիոնալ կոմունալ տեխնիկա ձեռք բերելու, համապատասխան պայմանագրի կնքման, լիզինգատուի և «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկի միջև կնքվելիք պայմանագրի(երի)ց բխող պարտավորությունների կատարման նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ) երաշխավորության տրամադրման, համապատասխան պայմանագրերի կնքման, ինչպես նաև նշված բոլոր պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրերի կնքման մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

4.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Շողակն տուֆերի հանքավայրի «ՍԵՎԱՐՏ» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

5.Հայստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Սարալանջ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող՝ «Մարմար Սթոուն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի մարմարի հանքավայրի շահագործման աշխատանքներին հավանություն տալու մասին

(զեկուցող Ա.Կարապետյան)

6.Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքը «Ապարան համայնքի Ապարան քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և օգտագործման իրավունքով հանձնելուն համաձայնություն տալու և այն համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ցանկում ներառելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

7.«Ապարան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 196-Ա որոշման թիվ 5 հավելվածում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

8.«Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և այն նոր խմբագրությամբ հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

9.Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին

(զեկուցող՝Ն.Սիրեկանյան)

10.Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ 144-Ա որոշումն մեջ փոփոխություն կատարելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

11.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ վարչական տարածքում գտնվող՝ 02-040-0129-0028 կադաստրային ծածկագրով Վարազդատ Ազատի Կարապետյանի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

12.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ վարչական տարածքում գտնվող՝ 02-040-0101-0493 կադաստրային ծածկագրով Հայրապետյան Վահագն Վլադիմիրի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ վարչական տարածքում գտնվող՝ 02-040-0101-0495 կադաստրային ծածկագրով Հայրապետյան Վահագն Վլադիմիրի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը եվ հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

14.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ վարչական տարածքում գտնվող՝ 02-040-0101-0496 կադաստրային ծածկագրով Հայրապետյան Վահագն Վլադիմիրի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

15.Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ 140-Ա որոշումն մեջ փոփոխություն կատարելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

16.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

17.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

18.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի քարտեզագրման աշխատանքների ընթացքում սխալմամբ համայնքի անվամբ հաշվառված և համայնքին սեփականության իրավունքով փոխանցված հողամասերը քաղաքացու սեփականություն ճանաչելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

19.Ապարանի համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վաճառքի տրամադրման թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

20.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության լճեր գործառնական նշանակության հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

21.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Արայի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող ներհամայնքային փողոցի անվանակոչման մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

22.«Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» ապարան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 30-ի N 131-Ա որոշման N 1 հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

23. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրի թիվ 02-102-0108-0001 կադաստրային ծածկագրով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

24. «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկին տարածք վարձակալելու համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Գ.Ալեքսանյան)

25.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵՋՈՐԹ » ՓԲԸ սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունները և հողատեսքերը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

26. Ապարանի համայնքի Վարդենուտ - Արայի վարչական տարածքների սահմանային հատվածում ե/բետոնյա հունով ջրատարի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման պահանջը դադարեցնելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

27.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

Ավագանի՝ (Կողմ - 14), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Դավթյան Արտյոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 156-Ն

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՊԱԿԱՍԵՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025 ԹՎԱԿԱՆԻ N194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված 235.36հզ. դրամը՝ ՔԿԱԳ-ի պատվիրակված լիազորությունների իրականացման, ինչպես նաև՝ համայնքի բյուջեի սահմաններում փոփոխությունների կատարման անհրաժեշտության հանգամանքը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի 2026թ բյուջեի եկամուտներում ու ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Վարչական բյուջեի եկամտային մասում կատարել ավելացում՝ ՔԿԱԳ-ի պատվիրակված լիազորություններ տողում՝ 235.36հզ.դրամով:

1.2 Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել ավելացումներ հետևյալ բնագավառներում.

1.3. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծախսային բնագավառի 4111 հոդվածը ավելացնել 235.36հզ. դրամով, 4232 հոդվածին՝ 800.0 հզ դրամով, 4823 հոդվածին՝ 3000.0 հզ.դրամով:

1.4 Լուսավորության բնագավառի 4212 հոդվածը ավելացնել 10000.0 հզ. դրամով:

1.5. Մշակույթային ծրագրեր բնագավառի 4239 հոդվածին՝ 14900.0 հզ. դրամով:

2.Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել պակասեցումներ հետևյալ բնագավառներում.

2.1. Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն բնագավառի 4637 հոդվածից պակասեցնել 20000.0հզ դրամ, 4655 հոդվածից՝ 8700.0հզ դրամ:

2.2 Ապարան համայնքի Ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել ավելացումներ հետևյալ բնագավառում.

2.3 Կոմունալ տնտեսություն հիմնարկ բնագավառի 5121 հոդվածին ավելացնել 33000.0 հզ. դրամով:

2.4 Ապարան համայնքի Ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել պակասեցումներ հետևյալ բնագավառում.

2.5 Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծախսային բնագավառի 5113 հոդվածից պակասեցնել 33000.0 հզ դրամ:

3.<<Ապարան համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին>> Ապարան համայնքի ավագանու 26.12.2025 թվականի N 194-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերի աղյուսակներում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն N 1, 2, 3, 4 հավելվածների:

Ավագանի՝	(Կողմ - 14),	(Դեմ-0),	(Ձեռնպահ-1),
	Կարապետյան Արկադի		Պետրոսյան Գոռ
	Ենոքյան Դավիթ		
	Կարապետյան Կարեն		
	Մակարյան Վահան		
	Խալաթյան Արթուր		
	Ավդալյան Արարատ		
	Երեմյան Աղվան		
	Մանուկյան Աղաբեկ		
	Գեղամյան Խաչիկ		
	Սահակյան Հովհաննես		
	Սաֆարյան Սևակ		
	Սարգսյան Արշակ		
	Դավթյան Արտյոմ		
	Սարգսյան Սուրեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. № 156-Ն որոշման

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ
N1 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		235.4	235.4	0.0
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, (տող 1341 + տող 1342 + տող 1343), այդ թվում՝	7421	235.4	235.4	x
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		235.4	235.4	x
1342Ա	ա)ՔԿԱԳ		235.4	235.4	x

Աշխատակազմի ղեկավար **Ի.Թադևոսյան**

Հավելված 2
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. № 156-Ն որոշման

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100)	235.4	235.4	0.0
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝	-28964.6	4035.4	-33000.0
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	-28964.6	4035.4	-33000.0
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	-28964.6	4035.4	-33000.0
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660),	14300.0	-18700.0	33000.0
2640	6	4	0	Փողոցների լուսավորում, որից՝	10000.0	10000.0	0.0
2641	6	4	1	Փողոցների լուսավորում	10000.0	10000.0	0.0
2660	6	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	4300.0	-28700.0	33000.0
2661	6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	4300.0	-28700.0	33000.0
2800	8	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝	14900.0	14900.0	0.0
2860	8	6	0	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող), որից՝	14900.0	14900.0	0.0
2861	8	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	14900.0	14900.0	0.0

Աշխատակազմի ղեկավար **Ի.Թադևոսյան**

Հավելված 3
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. № 156-Ն որոշման

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ
N3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝		235.4	235.4	0.0
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝	x	235.4	235.4	0.0
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝	x	235.4	235.4	0.0
4110	ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝	x	235.4	235.4	x
4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	235.4	235.4	x
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 + տող 4220 + տող 4230 + տող 4240 + տող 4250 + տող 4260), այդ թվում՝	x	25700.0	25700.0	x
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող 4215 + տող 4216 + տող 4217), որից՝	x	10000.0	10000.0	x
4212	- Էներգետիկ ծառայություններ	4212	10000.0	10000.0	x
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4231 + տող 4232 + տող 4233 + տող 4234 + տող 4235 + տող 4236 + տող 4237 + տող 4238), որից՝	x	15700.0	15700.0	x
4232	- Համակարգչային ծառայություններ	4232	800.0	800.0	x
4238	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	14900.0	14900.0	x
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4531 + տող 4532 + տող 4533), որից՝	x	-20000.0	-20000.0	x
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	-20000.0	-20000.0	x
4540	ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4541 + տող 4542 + տող 4543), որից՝	x	-8700.0	-8700.0	0.0
4541	- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	-8700.0	-8700.0	x
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող 4760 + տող 4770), այդ թվում՝	x	3000.0	3000.0	x
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ (տող 4721 + տող 4722 + տող 4723 + տող 4724), որից՝	x	3000.0	3000.0	x
4723	- Պարտադիր վճարներ	4823	3000.0	3000.0	x

5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝	x	0.0	x	0.0
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝	x	0.0	x	0.0
5110	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝	x	-33000.0	0.0	-33000.0
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-33000.0	x	-33000.0
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող 5121 + տող 5122 + տող 5123), որից՝	x	33000.0	0.0	33000.0
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	33000.0	x	33000.0

Աշխատակազմի ղեկավար **Ի.Թադևոսյան**

Հավելված 4
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. № 156-Ն որոշման

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.12.2025Թ. N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ N6 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տնտեսագիտական դասակարգման հոդված	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100)		235.4	235.4	0.0
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝		-28964.6	4035.4	-33000.0
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝		-28964.6	4035.4	-33000.0
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		-28964.6	4035.4	-33000.0
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	235.4	235.4	0.0
				- Համակարգչային ծառայություններ	4232	800.0	800.0	0.0
				- Պարտադիր վճարներ	4823	3000.0	3000.0	0.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-33000.0	0.0	-33000.0
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝		14300.0	-18700.0	33000.0
2640	6	4	0	Փողոցների լուսավորում, որից՝		10000.0	10000.0	0.0
2641	6	4	1	Փողոցների լուսավորում		10000.0	10000.0	0.0
				- Էներգետիկ ծառայություններ	4212	10000.0	10000.0	0.0
2660	6	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝		4300.0	-28700.0	33000.0
2661	6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		-28700.0	-28700.0	33000.0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	-20000.0	-20000.0	0.0
				- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	-8700.0	-8700.0	0.0
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	33000.0	0.0	33000.0

2800	8	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝		14900.0	14900.0	0.0
2860	8	6	0	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող), որից՝		14900.0	14900.0	0.0
2861	8	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)		14900.0	14900.0	0.0
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	14900.0	14900.0	0.0

Աշխատակազմի ղեկավար Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՄԱՐ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ԻՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԼԻԶԻՆԳԱՏՈՒ) ԼԻԶԻՆԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿՈՄՈՒՆԱԼ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ, ԼԻԶԻՆԳԱՏՈՒԻ և «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ(ԵՐԻ)Ց ԲԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԻՄՆԱՐԿ) ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկի աշխատանքները պատշաճ և արդյունավետ իրականացնելու նպատակով խիստ անհրաժեշտություն է առաջացել լիզինգի միջոցով ձեռք բերելու համակցված բազմաֆունկցիոնալ կոմունալ տեխնիկա (ջրող, ցանող, ալվող և հարթեցնող): Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1. Ապարան համայնքի տարեկան աշխատանքային պլանում կատարել լրացում՝ ներառելով «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» հիմնարկի միջոցով ձեռք բերել բազմաֆունկցիոնալ կոմունալ տեխնիկա, մասնավորապես՝ բեռնատար մեքենաներ և կցորդիչներ (այսուհետ՝ Գույք)՝ լիզինգի միջոցով և նրա պայմաններին համապատասխան: Գույքը սեփականության իրավունքով ձեռք բերելու պայմանով Լիզինգատուի իրավասու մարմնի կողմից որոշված տոկոսադրույքով և այլ պայմաններով կնքել մինչև 62,000,000.00 ՀՀ դրամ ներառյալ գումարի չափով մինչև 45 ամիս ներառյալ ժամկետով լիզինգի գլխավոր պայմանագիր, լիզինգի գլխավոր պայմանագրի հավելված լիզինգի պայմանագիր և (կամ) լիզինգի պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համաձայնագիր (այսուհետ՝ Լիզինգի պայմանագիր) և ստորագրել վերջինիս կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Համաձայնություն տալ լիզինգի գումարի փոփոխմանը լիզինգի գումարի մեջ ներառվող վճարների և ծախսերի չափի փոփոխությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, փոփոխված չափին համապատասխան:

2. Երաշխավորել Ապարան համայնքի «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» հիմնարկի կողմից Գույքի ձեռք բերման համար և պատասխանատվություն ստանձնել Լիզինգի պայմանագրի բոլոր կետերի ժամանակին կատարման համար:

3. Ի ապահովումն Լիզինգատուի և «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» հիմնարկի միջև կնքվելիք մինչև 62,000,000.00 ՀՀ դրամ ներառյալ գումարի չափով մինչև 45 ամիս ներառյալ ժամկետով լիզինգի գլխավոր պայմանագրի և լիզինգի պայմանագրի տրամադրել Հիմնարկի երաշխավորությունը, ինչպես նաև կնքել երաշխավորության պայմանագիր և (կամ) երաշխավորության

պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համաձայնագիր(եր): Համաձայնություն տալ լիզինգի գումարի փոփոխմանը լիզինգի գումարի մեջ ներառվող վճարների և ծախսերի չափի փոփոխությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, փոփոխված չափին համապատասխան:

Ավագանի՝ (Կողմ - 13), (Դեմ-1), (Ձեռնպահ-1),
Կարապետյան Արկադի Պետրոսյան Գոռ Սաֆարյան Սևակ
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սարգսյան Արշակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 158-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՂԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇՈՂԱԿՆ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ԱՄԱՌԱՆՈՑ» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ հոդվածի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթների, հիմք ընդունելով « ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ-ի 09.07.2026թ. դիմումը և 07.08.2026թ. կայացած հանրային քննարկման արձանագրությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող՝ Շողակն տուֆերի երևակման «ՍԵՎԱՐՏ» տեղամասում «օգտակար հանածոյի արդյունահանմանը:

2.Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում, ՀՀ լիազոր մարմնին և նախաձեռնողին՝ «ՍԵՎԱՐՏ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրել համայնքի ավագանու որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները և տեսաձայնագրությունը:

3. Որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 10), (Դեմ-1), (Ձեռնպահ-3),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սարգսյան Սուրեն

Սաֆարյան Սևակ

Սարգսյան Արշակ
Դավթյան Արտյոմ
Խալաթյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 159-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԻՎ 02-102-0108-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ թիվ 02-102-0108-0001 կադաստրային ծածկագրով հողամասը փոխանցելու ժամանակ տեղի է ունեցել սեփականության սուբյեկտի սխալ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ հաստատված կարգով 39-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ և 32-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Ապարանի համայնքի ղեկավարի առաջարկությունը և քաղաքացի՝ Վ.Ավետիսյանի 08.09.2026թ. դիմումը և իրավաբանական ծառայության դրական եզրակացությունը՝

Ապարանի համայնքի ավագանին որոշում է

1.Սեփականության սուբյեկտի սխալով փոխանցված թիվ 02-102-0108-0001 կադաստրային ծածկագրով քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

3. Դատական դեպոզիտ հաշվից համայնքապետարան փոխանցված հողամասի գումարը, փոխանցել 02-102-0108-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր ներկայացնող անձին:

3. Ուժը կորցրած ճանաչել Ապարան համայնքի ավագանու 23.06.2026թ. թիվ 119-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 160-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ «ՄԱՐՄԱՐ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՄԱՐՄԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ հոդվածի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթների, հիմք ընդունելով «Մարմար Սթոուն» ՍՊԸ-ի 30.06.2026թ. դիմումը և 22.06.2026թ. կայացած հանրային քննարկման արձանագրությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Սարալանջ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող՝ «Մարմար Սթոուն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Մարմարի հանքավայրի շահագործման աշխատանքներին:

2.Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում, ՀՀ լիազոր մարմնին և նախաձեռնողին՝ «Մարմար Սթոուն» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրել համայնքի ավագանու որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները և տեսաձայնագրությունը:

3. Որոշում ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝	(Կողմ - 11),	(Դեմ-0),	(Ձեռնպահ-2),
	Կարապետյան Արկադի		Սաֆարյան Սևակ
	Ենոքյան Դավիթ		Սարգսյան Արշակ
	Մակարյան Վահան		
	Խալաթյան Արթուր		
	Ավդալյան Արարատ		
	Երեմյան Աղվան		
	Մանուկյան Աղաբեկ		
	Գեղամյան Խաչիկ		
	Սահակյան Հովհաննես		
	Դավթյան Արտյոմ		
	Սարգսյան Սուրեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 161-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, 688-րդ հոդվածի 1-ին մասով, 689-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.07.2026թ. «Անշարժ գույք հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» թիվ 1103-Ա որոշումը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 30.07.2026 թ թիվ 1103-Ա որոշմամբ՝ ք. Ապարան Գայի 5 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող շենքի 1-ին և 2-րդ հարկերն ընդգրկող 575,14 քմ ընդհանուր մակերեսով տարածքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N03062026-02-0053, գույքի գրանցման համարը՝ 49.215.1112458, այսուհետ՝ կազմակերպություն) «Ապարան համայնքի Ապարան քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնելուն:

2. «Ապարան համայնքի Ապարան քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրեն Գ.Ալեքսանյանին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը՝ երկամսյա ժամկետում պետական լիազոր մարմնի հետ կնքել գույքի անհատույց և անժամկետ օգտագործման պայմանագիր:

3. Թիվ 1 մանկապարտեզի օգտագործմանը հանձնված 575,14 քմ շենքի տարածքը ներառել Ապարան համայնքի անշարժ գույքի հաշվառման ցանկում՝ 18.768.442 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 162-Ա

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 196-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 30.07.2026թ. թիվ 1103-Ա որոշմամբ Ապարան քաղաքի Գայի 5 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող շենքի 1-ին և 2-րդ հարկերն ընդգրկող 575,14 քմ տարածքը անհատույց օգտագործման է հանձնվել Ապարան քաղաքի թիվ 1 մանկապարտեզին՝ քաղաքի և համայնքի մյուս բնակավայրերում պահանջարկ ունեցող շուրջ 100 երեխաների ընդգրկելու 4 խմբերում, իսկ Լուսագյուղում գործող թիվ 1 մանկապարտեզը շարունակի գործել որպես Ապարան քաղաքում գործող թիվ 1 մանկապարտեզի մասնաճյուղ:
Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ դրույթներով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի թիվ 1 մանկապարտեզի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ նրանում ներառելով Լուսագյուղում գործող մասնաճյուղը:
2.«Ապարան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026թ. կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»N 196-Ա որոշման N5 հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ:
3. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարան աշխատակազմի քարտուղար Ի. Թադևոսյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2026թ. հոկտեմբերի 1-ից:

Ավագանի՝ (Կողմ - 13), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 5
Ապարան համայնքի ավագանու
26.12.2025 թ N 192-Ա որոշման
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. N 162-Ա որոշմամբ

,,ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ'' ՀՈՒԱԿ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2026 Թ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Թվ քանակ	Հաստի քային միավոր	Դրույքաչա փը/դրամ/	Հաստիքա վճար
1	Տնօրեն	1	1	205.000	205.000
2	Մեթոդիստ, ուսումնական գծով տեղակալ	1	1	140.000	140.000
3	Հաշվապահ	1	0,75	160.000	120.000
4	Հոգեբան /նաև մասնաճյուղի համար/	1	1	130.000	130.000
5	Լոգոպեդ /նաև ասնաճյուղի համար/	1	1	130.000	130.000
6-9	Դաստիարակ	4	4,48	135.000	604.800
10	Երաժշտության դաստիարակ	1	1	130.000	130.000
11-14	Դաստիարակի օգնական-դայակ	4	4	130.000	520.000
15	Բուժքույր	1	1	130.000	130.000
16	Ֆիզ.հրահանգիչ	1	1	120.000	120.000
17	Տնտեսվար	1	0,75	120.000	90.000
18	Խոհարար	1	1	125.000	125.000
19	Խոհարարի օգնական	1	1	115.000	115.000
20	Փականագործ-էլեկտրամանտյոր-պահակ	1	1	115.000	115.000
21	Հավաքարար-օժանդակ բանվոր- լվացարար	1	1	106.000	106.000
	ԸՆԴԱՄԵՆԸ	21	20,73		2.780.800
	ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ				
1	Մեթոդիստ, ուսումնական գծով տեղակալ	1	0,75	140.000	105.000
2	Բուժքույր	1	0,85	130.000	110.500
3	Տնտեսվար-գործավար	1	0,75	120.000	90.000
4-6	Դաստիարակ	3	3,36	135.000	453.600
7	Երաժշտության դաստիարակ	1	0,75	130.000	97.500
8-10	Դաստիարակի օգնական	3	3	130.000	390.000
11	Խոհարար	1	1	125.000	125.000
12	Խոհարարի օգնական	1	0,75	115.000	86.250
13	Փականագործ-էլեկտրամանտյոր-պահակ	1	0,85	115.000	97.750
14	Հավաքարար-օժանդակ բանվոր-լվացարար	1	0,75	106.000	79.500
	ԸՆԴԱՄԵՆԸ	14	12,81		1.635.100
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝	35	33,54		4.415.900

Աշխատակազմի ղեկավար Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 163-Ա

«ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկը տնտեսական կարիքների և պահեստային տնտեսության համար չունի համապատասխան հողատարածք և շինություն, ուստի՝ հիմք ընդունելով «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկի տնօրենի գրությունը, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի դիտարկումների արդյունքում արված միջնորդությունը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասին 13-րդ կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի պահանջների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային հիմնարկի տնտեսական կարիքների և պահեստային տնտեսության ապահովման նպատակով վարձակալելու քաղաք Ապարան Նժդեհի 16 հասցեում գտնվող, Նարեկ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 02-002-085-002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը, ամսեկան 350.000 ՀՀ դրամ վարձավճարով, 2 տարի ժամկետով:

2.Հիմնարկի հաշվապահությանը՝ վարձակալության պայմանագրին համապատասխան «Ապարան համայնքի կոմունալ տնտեսություն» հիմնարկին հատկացնելու անհրաժեշտ ֆինանսավորում:

3.Կոմունալ վարձավճարները, ինչպես նաև հարկային պարտավորությունները կատարվում է վարձակալի կողմից:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝	(Կողմ - 11),	(Դեմ-0),	(Ձեռնպահ-0),	(Չի քվեարկել-2),
	Կարապետյան Արկադի			Սարգսյան Սուրեն
	Ենոքյան Դավիթ			Սարգսյան Արշակ
	Մակարյան Վահան			
	Խալաթյան Արթուր			
	Ավդալյան Արարատ			
	Երեմյան Աղվան			
	Մանուկյան Աղաբեկ			
	Գեղամյան Խաչիկ			
	Սահակյան Հովհաննես			
	Սաֆարյան Սևակ			
	Դավթյան Արտյոմ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Թ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 164-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով 03.07.2026թ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 404-Ն փոփոխությունը՝ այն է. «աշխատակազմի քարտուղար» բառերը համապատասխան փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է

1.Ապարան համայնքի ավագանու 27.12.2021 թվականի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 101-Ն որոշման 2-րդ հավելվածով հաստատված կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ և այն հաստատել նոր խմբագրությամբ:

2.Աշխատակազմի ղեկավարին՝ նոր խնբագրությամբ հաստատված կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստր գրանցման:

3.Որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0), (Չի քվեարկել-2),
Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հաստատված է

Ապարան համայնքի ավագանու
27.12.2021թ. N 101-Ն որոշմամբ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
Ապարան համայնքի ավագանու
28.04.2023թ. N 34-Լ որոշմամբ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. N 164-Լ որոշմամբ
Ապարան համայնքի ղեկավարի
առաջին տեղակալ

Ա.Գ.Կարապետյան

08 սեպտեմբերի 2026թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԱՊԱՐԱՆ – 2026

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի (այսուհետ՝ համայնք) համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանիներն կազմակերպում են իրենց գործունեությունը:
2.Աշխատակազմը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 49.181.994563, ՀՎՀՀ 05022969) և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 50.180.755744, ՀՎՀՀ 05400811) իրավահաջորդը:
3.Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին», Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայության մասին», Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին», Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի», այլ օրենքների ու իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրության հիման վրա:
4.Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:
5.Աշխատակազմի անվանումն է՝
1)հայերեն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:
2) հայերեն կրճատ՝ Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ ՀԿՀ:
3) ռուսերեն լրիվ՝«Аппарат муниципалитета Апарана Арагацотнского марза Республики Армения» Общественное административное учреждение.
4) ռուսերեն կրճատ՝Аппарат муниципалитета Апарана ОАУ
5) անգրելերն լրիվ՝"Staff of the Aparan Municipality of the Aragatsotn province of the Republic of Armenia" municipal administrative institution
6) անգլերեն կրճատ՝Staff of the Aparan municipality municipal administrative institution
6.Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:
7. Աշխատակազմը անձամբ չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառույթների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով և (կամ) ավագանու սահմանված չափով և կարգով:
8.Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, քաղաք Ապարան, Մարշալ Բաղրամյան փողոց շենք 26, փոստային դասիչ՝0301:
9. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պատասխանատվություն, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
10. Աշխատակազմը կազմված է կառուցվածքային ստորաբաժանումներից:
11. Աշխատակազմի նպատակն ու խնդիրները համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի (ղեկավարի) մասնակցության ապահովումն է:
12.Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության հիմնարկների, ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ համայնքային կազմակերպությունների) գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր

մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:
13. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:
14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառույթներն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

16. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում՝ անձանբ և իր տեղակալների միջոցով, որոնք գործում են համայնքի ղեկավարի անունից, համապատասխանաբար համակարգում են Աշխատակազմի ստորաբաժանումների, կազմակերպությունների աշխատանքները և պատասխանատվություն են կրում իրենց համակարգման ոլորտում գործող ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետ կազմակերպման և անհրաժեշտ արդյունքների ապահովման համար:
17. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների միջոցով:
18.Համայնքի ղեկավարը՝

1) հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ սույն օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.

2) համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում.

3) համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

3.1) մշակում և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունը.

3.2) տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները.

4) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.

5) աշխատակազմի և համայնքային համայնքային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը՝ օրենքով նախատեսված դեպքում.

6) համայնքային ծառայության մասով աշխատակազմի կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

7) աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

8) համայնքային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

9) նշանակում և ազատում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի ղեկավարին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

10) համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով:

Համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ:

11) հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունում է տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշում.

12) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

13) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.

14) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին.

15) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատելու այն վայրերի ցանկը, որտեղ կթույլատրվի կայանել վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցները.

16) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով պետական ճանապարհային մարմնի, իսկ երթևեկության անվտանգության մասով՝ պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման.

17) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ.

18) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

19) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը, տալիս է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման թույլտվություն.

20) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն, ինչպես նաև համայնքի բնակավայրերում այդ թույլտվության տրամադրումը կարող է լիազորել վարչական ղեկավարին.

21) տալիս է համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն.

22) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ.

23) ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում.

24) օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր.

25) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության.

26) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը.

27) տեղական՝ շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների և նրանց գործադիր մարմինների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի պահանջների կատարման համար անհրաժեշտ փոփոխություններ և

լրացումներ է կատարում համապատասխան ակտերում կամ ուժը կորցրած ճանաչում տեղական՝ շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների և նրանց գործադիր մարմինների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերը.

28) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.

29) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և այդ ուղղությամբ ձեռնարկում համապատասխան միջոցներ.

30) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հակակոռուպցիոն ծրագրի նախագիծը.

31) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

19.Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը.

1) Համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է: Համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս երկու տեղակալ:

2) Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ: Համայնքի ղեկավարի բացակայության ընթացքում, երբ առկա է բացակայությունը հիմնավորող իրավական ակտ(արձակուրդի, գործուղման, հիվանդության վերաբերյալ), նրա առաջին տեղակալը առանց որևէ իրավական ակտի, օրենքի ուժով, իրականացնում է համայնքի ղեկավարի պարտականությունները: Կարճատև բացակայության ընթացքում(այցելություն համայնքի կազմում ներառված բնակավայրեր, արտաքին խորհրդակցությունների մասնակցություն և այլն) համայնքի ղեկավարի պարտականությունների կատարման հետ կապված հարցերը կարգավորվում են բանավոր կամ գրավոր կարգադրությամբ:

3)Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման մասով որևէ սահմանափակում չի դրվում:

Համայնքի ղեկավարի տեղակալը(ները).

4) Համայնքի ղեկավարի տեղակալին**(ներին)** պաշտոնի նշանակում է համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ, իսկ պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարի տեղակալի կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման մասով որևէ սահմանափակում չի դրվում: Համայնքի ղեկավարի տեղակալը/ները/ լիազորությունների ուղղությունների ու շրջանակները կարգավորվում են համայնքի ղեկավարի բանավոր կամ գրավոր որոշմամբ կամ կարգադրությամբ:

5) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմի ստորաբաժանումներին, համայնքային կազմակերպություններին համայնքի ղեկավարի կողմից տրվող կոնկրետ հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն, խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով Աշխատակազմի ստորաբաժանումներին, համայնքային կազմակերպություններին, համայնքային ծառայողներին տալիս է գրավոր և բանավոր հանձնարարականներ և իրականացնում է դրանց կատարման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն,

6)համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և(կամ) իր նախաձեռնությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ,

7)համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը,

8)իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ,

9)իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները,

10)պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին,

11)ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին,

12)վարչական մարմնի անունից օրենքով սահմանված կարգով հարուցում և իրականցնում է վարչական վարույթներ, վարչական գործերի քննություն, ընդունում է որոշումներ,

13) Համայնքի ղեկավարի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր:

14) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

20.Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, ռեֆերենտ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը:

21. Համայնքի ղեկավարի խորհրդականը՝

1)համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է իր աշխատանքային ծրագիրը.

2)պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցուներ, անհրաժեշտ վերլուծկան նյութեր իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

3)կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն

4)համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարան մարմիններում, կազմակերպություններում՝ իրենց հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը

5)համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկմանը

6)կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

22.Համայնքի ղեկավարի օգնականը՝

1)կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.

2)համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին

3)կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը

4)համագործակցելով Աշխատակազմի մասնագետների, ստորաբաժանումների ղեկավարների հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ

6)կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ

23.Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝

1)համայնքի ղեկավարի տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին.

2)անցկացնում է ասուլիսներ և ճեպազրույցներ

3)իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ և վերլուծություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը

4)կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ:

5)համայնքի ղեկվարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով:

6)կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

24.Համայնքի ղեկավարի ռեֆերենտը՝

1) իրականացնում է համայնքի ղեկավարի ելույթների և նամակների, ինչպես նաև նրա անունից նախապատրաստվող այլ փաստաթղթերի նախապատրաստումը,
2) իրականացնում է տեղեկատվական-խորհրդատվական, վերլուծական աշխատանքներ,
3) կատարում է համայնքի ղեկավարի առանձին հանձնարարականներ:

25. Համայնքի ավագանին՝

1) վերահսկողություն է իրականացվում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.
2) որոշում է Աշխատակազմի հանձնվող գույքի կազմը և չափը,
3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը:
4)սահմանում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, խորհրդականի, օգնականի, վարչական ղեկավարի, մամուլի քարտուղարի, ռեֆերենտի, աշխատակազմի ղեկավարի, աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը:
5)օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին:
6)օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
7)սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը
8) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայանցնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.
9)իրականացնում էՀայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

26.Վարչական ղեկավարը՝

1)Վարչական ղեկավարի պաշտոնը համայնքային վարչական պաշտոն է: Վարչական ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատու է համայնքի ղեկավարը:
2)Վարչական ղեկավարի լիազորությունները սահմանվում են օրենքով, իսկ գործառույթները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և աշխատակազմի կանոնադրությամբ:
3)բնակավայրի տարածքում գործում է համայնքի ղեկավարի անունից:
4)հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.
5)աջակցում է իր բնակավայրում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացմանը.
6) բնակավայրի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված իրավական ակտով, ինչպես նաև Ավագանու ընդունած համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգը հաստատելու մասին որոշումը:
7)օրենքով սահմանված կարգով ապահովում է տեղական հարկերի, տուրքերի, վճարների և վարձավճարների գանձումն ու վերահսկումը:
8)համայնքի Ավագանու սահմանված կարգին համապատասխան՝ անցկացնում է բնակավայրերին վերաբերող հարցերի հանրային լսումներ կամ քննարկումներ և արդյունքների մասին տեղեկատվություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին
9)մասնակցում է համայնքի Ավագանու նիստերին, առաջարկություններ է ներկայացնում ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ:
10) բնակավայրում բնակիչներին ընդունելության կազմակերպման, հանրային հանդիպումների ու քննարկումների կազմակերպմանն ու անցկացմանը:

11)պատասխանատվություն է կրում վարչական ղեկավարի նստավայրին հատկացված՝ գույքի պահպանության համար:
12)իրականացում է կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

27. Աշխատակազմի ղեկավարը՝

Աշխատակազմի ընթացիք գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում, մասնավորապես՝

1) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

2) կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը.

3) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

4) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

5) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը.

6) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

7) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով.

8) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

9) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.

10) ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերի համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

11)օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

12)օրենքով սահմանված դեպքերում շնորհում է ՀՀ համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից,

13)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքներ և կարգապահական տույժերը:

14) օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.

15) իրականացնում է օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

16) Աշխատակազմի ղեկավարը պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, աշխատակազմի կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17)Աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

28.Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետն է:

29.Գլխավոր ֆինանսիստը՝

1) ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական հանձնարարականներով և իրականացում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները:

2) իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

3.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

30.Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

31.Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

4.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

32.Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանվում է պետական լիազորված մարմինը:

33.Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներն, ինչպես նաև համայնքային կազմակերպություններն ունեն կանոնադրություն, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու կողմից:

5. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

34.Աշխատակազմի բաժիններն ապահովում են համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ իրենց մասնագիտական ուղղվածությանը համապատախան:

35.Աշխատակազմի բաժինները գլխավորում են բաժնի պետերը, որոնք ենթակա և հաշվետու են համայնքի ղեկավարին, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալներին և աշխատակազմի ղեկավարին:

36.Բաժինների պետերին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժինների աշխատողները:

37.Աշխատակազմի յուրաքանչյուր բաժին անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին իրենց կանոնադրական լիազորությունները իրականացնելու գործում:

38.Աշխատակազմի բաժինները կարող են ունենալ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի ձևաթուղթ:

39.Բաժինների պետերը՝

1) կազմակերպում են բաժնի աշխատանքները, իրենց իրավասության շրջանակներում տալիս են հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը,

2) աշխատակազմի ղեկավարին և համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում՝ բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և (կամ) աշխատակազմի ղեկավարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում են համայնքապետարանի և (կամ) այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,

4) ստորագրում են իրենց և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

5) համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և (կամ) աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ ապահովում են իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը,

6) աշխատակազմի ղեկավարին ներկայացնում են առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում են բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը,

7) կազմակերպում են քաղաքացիների դիմումների, առաջարկությունների, բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալին և աշխատակազմի ղեկավարին,

8) համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի, աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ կազմակերպում են խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը,

9) համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և (կամ) աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ,

10) պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության պահանջները, տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40.Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

41. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել ստուգման, աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

7.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

42. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 165-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան համայնքի բնակիչների դիմումների վերաբերյալ բնակավայրերի վարչական ղեկավարների դրական կարծքիներից ելնելով Ապարան համայնքի ղեկավարի դրիքորոշումը, ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 22.06.2012թ-ի N 822-Ն որոշման պահանջներով:

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի 5 բնակավայրերի 5 քաղաքացիների տրամադրել հարկային արտոնություններ՝ հողի հարկի տույժ՝ 184.891 դրամի չափով, փոխադրամիջոցի գույքահարկի մայր գումար՝ 405.000 դրամի չափով և փոխադրամիջոցի գույքահարկի տույժ՝ 166.555 դրամի չափով: Ընդամենը՝ 756.446 դրամի չափով, համաձայն՝ հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով հարկային շտեմարանում ամրագրել արտոնությունները:

3.Որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-1),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն
Երեմյան Աղվան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Ապարան համայնքի ավագանու
08.09.2026թ. N 165-Ա որոշմամբ

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բնակավայր	Հ/Հ	Սոցիալական քարտ	Դիմողի Անուն,Ազգանուն	Հաշվառման հասցե	Սեփականա-տիրոջ Անուն,Ազգանուն	Գույքի գտնվելու հասցե	Հողի հարկ		Անշարժ գույքի հարկ		Փոխադրամիջոց		Լրացուցիչ տեղեկու-թյուններ
							Ապառք	Տույժ	Ապառք	Տույժ	Ապառք	Տույժ	
Շենավան	1	2801480193	Դիմիտրի Մովսիսյան	Գ.Շենավան 20փ. տ.24		Գ.Շենավան		25483					Մայր գումարը վճարված է,բնակվում են ամուսիններով, երկուսն էլ կենսաթոշակառու, այլ եկամտի աղբյուր չունեն և չեն կարողանում զբաղվել հողագործությամբ
Վարդենիս	1	3501600364	Սերժիկ Գրիգորյան	Գ.Վարդենիս		Գ.Վարդենիս 10փ. 1փկղ.տ.2		40151					Մայր գումարը,վճարված է, ըստ սոց.ՀՈԱԿ-ի եզրակացության ընտանիքը բազմանդամ է /11 հոգի/զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ,սոց. վիճակը բավարար
Մելիքգյուղ	1	1610760093	Հարություն Խաչատրյան	Գ.Մելիքգյուղ 3փ. տ.17	Ղազար Խաչատրյան	Գ.Մելիքգյուղ		57707					Սեփ. մահացած է, դիմողը 3-րդ խմբի հաշմանդամ,սոց.վիճակը բավարար
Հարթավան	1	7808700436	Սիլվա Դիլանյան	Գ.Հարթավան 9փ. տ.8	Արուս Սահակյան	Գ.Հարթավան		61550					Սեփ.մահացած է,մայր գումարը վճարված, բնակվում են 7 հոգով, չունեն մշտական աշխատանք, զբաղվում են հողագործությամբ, սոց.վիճակը բավարար
Ծաղկաշեն	1	1101671440	Զալիբեկ Ավագյան	Գ.Ծաղկաշեն 1փ.տ.54		Գ.Ծաղկաշեն					405000	166555	Փոխադրամիջոցը գոյություն չունի, դիմողը կենսաթոշակառու
	5	Ընդամենը						184891			405000	166555	

Աշխատակազմի ղեկավար Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 166-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԹԻՎ 144-Ա ՈՐՈՇՈՒՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ 144-Ա որոշման մեջ տեխնիկական վրիպակների պատճառով սխալ է գրվել քաղաքացու անունը, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով.

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 24-ի թիվ 144-Ա որոշման մեջ գրված Ռաֆիկ Գևորգի Փարվանյանի փոխարեն կարդալ Ռաֆայել Գևորգի Փարվանյան:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ - 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 167-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԱԶԴԱՏ ԱԶԱՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ 02-040-0129-0028 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի եղիպատրոշ վարչական տարածքի սահմաններում գտնվող Վարազդատ Ազատի Կարապետյանի սեփականությունը հանդիսացող 02-040-0129-0028 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր՝ համաձայն աղյուսակի:
2.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
3.Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2027թ հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Աղյուսակ

N	Սեփականատերը	ծածկագիրը	Մակերես /հա/	Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Փոփոխված հողամասի նպատակային և գործառնական նշանակություն	Դրական եզրակացության ամիս, ամսաթիվ, համարը
1	Վարազդատ Ազատի Կարապետյան	02-040-0129-0028	0.25	Գյուղատնտեսական վարելահող	Բնակավայրերի բնակելի կառուցապատման	17.08.2026 թ թիվ 1/փ-362

Ավագանի՝ (Կողմ - 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Երեմյան Աղվան
Մանուկյան Աղաբեկ
Գեղամյան Խաչիկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Դավթյան Արտյոմ
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ № 168-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՎԱՀԱԳՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 040-0101-0493 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ.դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ,43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերով, և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-իթիվ 1920-Ն որոշմամբ.
Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի եղիպատրոշ վարչական տարածքի սահմաններում գտնվող Վահագն Վլադիմիրի Հայրապետյանի սեփականությունը հանդիսացող 02-040-0101-0493 կադաստրային ծածկագրով 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխել և դարձնել՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր՝ համաձայն աղյուսակի:
2.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
3.Փոփոխված հողամասը պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2027թ հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Աղյուսակ

